

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:


Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նկարում պատկերված է.

- 1) լեռնահովիտ
- 2) հարթավայր
- 3) գոգավորություն
- 4) բլուր



2 Ո՞ր ժամային գոտին է արևելյան երկայնության $22^{\circ}30'$ և $37^{\circ}30'$ միջօրեականների միջև.

- 1) երկրորդ
- 2) երրորդ
- 3) զրոյական կամ 24-րդ
- 4) առաջին

3 Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 11250 կմ է, իսկ քարտեզում՝ 45 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 40 000 000
- 2) 1 : 4 000 000
- 3) 1 : 2 500 000
- 4) 1 : 25 000 000

4 Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) տաք օդի վեր բարձրանալը
- 2) նյութերի համաշխարհային շրջապտույտը քարոլորտում
- 3) ծովային հոսանքների ուղղության շեղումը նախնական ուղղությունից
- 4) տարվա եղանակների հերթափոխը

5 Մթնոլորտային ճնշումը կախված է.

- 1) վայրի բուսածածկույթից
- 2) տեղումների տեսակից
- 3) վայրի բացարձակ բարձրությունից
- 4) ամպամածությունից

6 Որն է տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) օվկիանոսի ջրի աղիությունից
- 2) ծովային հոսանքների տեսակից
- 3) գերիշխող քամիների ուղղությունից
- 4) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից

7 Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը ուղեծրի հեռակետում լինում է.


- 1) մարտի 21-ին
- 2) հուլիսի 5-ին
- 3) սեպտեմբերի 23-ին
- 4) հունվարի 3-ին

8 Մեծ Արարատ լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 320 մմ ս. ս. է: Նույն պահին ճնշումը Արարատյան դաշտում (ծովի մակարդակից մոտ 850 մ բարձրության վրա) կլինի.

- 1) 751 մմ
- 2) 760 մմ
- 3) 670 մմ
- 4) 431 մմ


9 Նկարում պատկերված է.

- 1) նավթամուղ
- 2) գծային մասշտաբ
- 3) երկաթուղի
- 4) թվային մասշտաբ



10 Ո՞ր կլիմայական մարզում է Բ բնակավայրը.

- 1) արևադարձային խոնավ
- 2) արևադարձային չոր
- 3) մերձարևադարձային չոր
- 4) մերձարևադարձային միջերկրածովային



11

Ո՞ր ծովածոցերն են արևադարձային գոտում.

- 1) Սիամի և Բենգալական
- 2) Բիսկայան և Բոտնիկական
- 3) Կալիֆոռնիական և Պարսից
- 4) Կարպենտարիա և Մեծ Ավստրալական

12

Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.

- 1) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին
- 2) Ավստրալիայի ծայր հարավարևմտյան մասին
- 3) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին
- 4) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին

13

Բնութագրումով որոշել բնական զոնան.

Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.

- 1) անապատը
- 2) տունդրան
- 3) սավաննան
- 4) տափաստանը

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:
- 2) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:
- 3) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 4) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:

15

Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մայրցամաքի արևելյան հարթավայրային շրջաններում արևելքից արևմուտք տեղումների քանակը նվազում է:
- 2) Մայրցամաքի հարավում՝ արևադարձային ծովամերձ շրջաններում, պասսատների ազդեցությամբ թափվում են մինչև 2500–4000 մմ տեղումներ:
- 3) Մայրցամաքի կենտրոնական մասում ձմռանը ձևավորվում է ցածր ճնշման մարզ:
- 4) Ամենաբարձր ջերմաստիճանը (+57°C) գրանցվել է Մահվան հովտում:

16

«Գետ – վտակներ» զույգերից ո՞րն է սխալ.

- 1) Վոլգա – Օկա, Կամա
- 2) Գանգես – Բրահմապուտրա, Ինդոս
- 3) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս
- 4) Կուր – Արաքս, Ախուրյան

17

«Հարթավայր – աշխարհամաս» զույգից ընտրել սխալը.

- 1) Դեկանի – Ասիա
- 2) Հյուսիս-Գերմանական – Եվրոպա
- 3) Լենքորանի – Եվրոպա
- 4) Միջագետքի – Ասիա

18


«Նեղուց – հարակից աշխարհագրական օբյեկտ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կուկի – Նոր Գվինեա կղզի
- 2) Բասսի – Թասմանիա կղզի
- 3) Բասսի – Քեյփ Յորք թերակղզի
- 4) Թորեսի – Առնհեմլենդ թերակղզի

19

Քարտեզում Գ տառով նշված օվկիանոսային հոսանքն է նշված.

- 1) Գվիանական
- 2) Բրազիլական
- 3) Պերուական
- 4) Ֆոլկլենդյան



20

Քարտեզում Ը տառով նշված մայրաքաղաքն է նշված.

- 1) Բրազիլիա
- 2) Ասունսիոն
- 3) Լա Պաս
- 4) Կարակաս

21

Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում է.

- 1) Երկրի առանցքի ուղղության շեղում
- 2) Երկրի մագնիսական բևեռների տեղափոխություն
- 3) շարժվող մարմինների շեղում նախնական ուղղությունից
- 4) տարվա եղանակների հերթափոխ

22

Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ձմռանը մերձարևադարձային գոտիներում տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:
- 2) Հասարակածային կլիմայական գոտում տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 3) Մայրցամաքի ծայր հյուսիսային և հարավային շրջանները մերձարևադարձային գոտիներում են:
- 4) Հասարակածային կլիմայական գոտում ջերմաստիճանների տատանումների տարեկան լայնույթը ընդամենը 10° – 12° է:

23

Հունիսի 22-ին հարավային կիսագնդի ցանկացած վայրի համար ճառագայթների անկման անկյունը ո՞ր բանաձևով է հաշվարկվում.

- 1) $\alpha = 90^{\circ} - \varphi$
- 2) $\alpha = 90^{\circ} + \varphi$
- 3) $\alpha = 90^{\circ} - (\varphi + 23,5^{\circ})$
- 4) $\alpha = 90^{\circ} - (\varphi - 23,5^{\circ})$

24


Հարավային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարածաշրջանի բոլոր երկրները հանրապետություններ են:
- 2) Տարածաշրջանի ամենազարգացած երկրներն են Իտալիան և Իսպանիան:
- 3) Ժողովուրդների մեծամասնության լեզուները պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական լեզվախմբին:
- 4) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:

25

Քարտեզում 3 թվով նշված են այն տարածքները, որտեղ.

- 1) կանանց և տղամարդկանց թվաքանակները հավասար են
- 2) անմարդաբնակ են
- 3) կանանց թվաքանակը գերազանցում է տղամարդկանց թվաքանակին
- 4) տղամարդկանց թվաքանակը գերազանցում է կանանց թվաքանակին



26

Ո՞ր տիպի քաղաքներին են բնորոշ անսովոր խիտ և ցածրահարկ կառուցապատումը և բարեկարգման ցածր մակարդակը.

- 1) ասիական
- 2) եվրոպական
- 3) լատինամերիկյան
- 4) ամերիկյան

27

Քաղաքային ազլումերացիաների ընդարձակման և միաձուլման հետևանքով ձևավորված ավելի հզոր ու ընդարձակ ուրբանիզացված գոտին կոչվում է.

- 1) մեգալոպոլիս
- 2) տրանսպորտային հանգույց
- 3) տեխնոպոլիս
- 4) ուրբանիզացիա

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Տարածքի մեծությամբ աշխարհի 7-րդ պետությունն է: Ըստ պետական կառուցվածքի՝ դաշնային հանրապետություն է: Աշխարհի առավել բազմազգ ու բազմալեզու պետություններից է: Այս պետությունն առաջատարներից է թեյի, մանգոյի և ադամաթզի բերքով: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Ինդոնեզիան
- 2) Իրանը
- 3) Հնդկաստանը
- 4) Կանադան

29

Քաղաքի բնակչության թիվը 128,000 է, բնական աճի գործակիցը՝ 24 %: Մեկ տարվա ընթացքում երկիր է եկել 5485 մարդ, մեկնել՝ 3780 մարդ: Երկրի բնակչության թիվը մեկ տարի հետո կկազմի.

- 1) 1325485 մարդ
- 2) 132777 մարդ
- 3) 131072 մարդ
- 4) 1323780 մարդ

30

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները:
- 2) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում:
- 3) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին:
- 4) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին:

31

Միայն մեկ երկրի հետ պետական սահման ունեն.

- 1) Չիլին և Մեքսիկան
- 2) Մոնղոլիան և Ալբանիան
- 3) Իսպանիան և Նորվեգիան
- 4) Պորտուգալիան և Կանադան

32

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 2) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 3) Աէկներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 4) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:

33

Թուրքական լեզվախմբի ժողովուրդներ չեն.

- 1) դրոզները և ադրբեջանցիները
- 2) դազախները և ուզբեկները
- 3) տաջիկները և պարսիկները
- 4) թուրքմենները և թուրքերը

34

Գյուղատնտեսական հողահանդակ չէ.

- 1) խոտհարքը
- 2) անտառը
- 3) վարելահողը
- 4) արոտավայրը

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Համաշխարհային էլեկտրաէներգիայի կառուցվածքում առաջատարը ջրաէներգետիկան է:
- 2) Արեգակնային էներգիայի օգտագործումը մեծ է հատկապես բարեխառն գոտու խոնավ շրջաններում:
- 3) Կրթությունը, գիտությունը, մշակույթը ոչ արտադրական ոլորտի ճյուղերից են:
- 4) Ներկայումս համաշխարհային էներգետիկան իր զարգացման ասիային փուլում է:

36

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ռոտոզվի երկրագործությունն է:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 3) Երկիրը հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով:
- 4) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչորային շրջանն է:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյուղատնտեսության գլխավոր արտադրության միջոցը հողն է:
- 2) Գյուղատնտեսական արտադրության մեջ լավ է արտահայտված սեզոնայնությունը:
- 3) Բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղատնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա աննշան է:
- 4) Գյուղատնտեսությունն, ի տարբերություն արդյունաբերության, ունի տարածքային համատարած տեղաբաշխում:

38

Տրանսպորտային ցանցի զծային կոնֆիգուրացիան բնորոշ է.

- 1) Արգենտինային և Բրազիլիային
- 2) ԱՄՆ-ին և Չինաստանին
- 3) Կուբային և Չիլիին
- 4) Կանադային և Ռուսաստանին

39

Դեպի ծով ելք չունեն.

- 1) Ալժիր և Պերու
- 2) Ռումինիա և Ուկրաինա
- 3) Ավստրիա և Չեխիա
- 4) Բելգիա և Բուլղարիա

40

«Ջրանցք – պետություն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կորնթոսի – Ֆրանսիա
- 2) Քիլի – Գերմանիա
- 3) Սուեզի – Իսրայել
- 4) Պանամայի – Կոլումբիա

41

Եվրոպա աշխարհամասի այս տարածաշրջանը հարուստ է անտառային և ջրային ռեսուրսներով: Տարածաշրջանի երկրները բնութագրվում են բնակչության ցածր բնական աճով, իսկ կյանքի միջին տևողությամբ աշխարհի առաջատարներից են: Հավատացյալ բնակչության հիմնական մասը քրիստոնյա բողոքականներ են: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

- 1) Հարավային Եվրոպան
- 2) Արևմտյան Եվրոպան
- 3) Հյուսիսային Եվրոպան
- 4) Արևելյան Եվրոպան

42

Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տնտեսությունը արդյունաբերական (ինդուստրիալ) զարգացման փուլում է:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 3) Բնակչության թվով Եվրոպայում երկրորդն է՝ Ֆրանսիայից հետո:
- 4) Բնակչության բնական աճի ցուցանիշը բարձր է:

43

Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.

- 1) Երզնկայի, Կարնո, Աշկալայի
- 2) Դերջանի, Երզնկայի, Կամախի
- 3) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի
- 4) Մշո, Բալահովտի, Խարբերդի

44

«Լճային գոգավորություն – ծագում» գույգերից ընտրել սխալը.

- 1) Քարի – սառցադաշտային
- 2) Փարվանա – մնացորդային
- 3) Ուրմիա – տեկտոնական
- 4) Վանա – տեկտոնահրաբխային

45

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օդի առավելագույն ջերմաստիճանը $+46^{\circ}\text{C}$ է:
- 2) Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերին կազմում է $72^{\circ}-77^{\circ}$:
- 3) Ամենատաք ամիսը մայիսն է:
- 4) Կլիման պայմանավորող գլխավոր գործոնը մթնոլորտի տեղական շրջանառությունն է:

46

Մեծամորի ակեր միջին հաշվով տարեկան արտադրում է ՀՀ-ում արտադրվող 7,5 մլրդ կՎտ•ժ էլեկտրաէներգիայի 29 %-ը: Տարեկան որքա՞ն էլեկտրաէներգիա է արտադրում Մեծամորի ակեր.

- 1) 2,87 մլն կՎտ•ժ
- 2) 82 մլն կՎտ•ժ
- 3) 2175 մլն կՎտ•ժ
- 4) 820 մլն կՎտ•ժ

47

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ում հացահատիկ մշակում են 500–2200 մ բարձրություններում:
- 2) ՀՀ բուսաբուծության մասնագիտացման կարևոր ուղղություններից է այգեգործությունը:
- 3) Չորացման շնորհիվ ՀՀ լեռնամարգագետնային հողերը դարձել են մշակովի:
- 4) ՀՀ-ում ոչխարաբուծությունը մասնագիտանում է մսակաթնաբրդատու ուղղությամբ:

48

Տավուշի մարզի հյուսիսի ցածրադիր հովիտներում կլիման.

- 1) չափավոր ցամաքային է
- 2) չոր և խիստ ցամաքային է
- 3) չոր մերձարևադարձային է
- 4) բարեխառն լեռնային է

49

Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.

- 1) ալպյան և մերձալպյան
- 2) լեռնատափաստանային
- 3) կիսաանապատային
- 4) անտառային

53 **Քաղցրահամ ջրի պաշարներով սակավ ապահովված երկրներ են.**

- 1) Կանադան և ԱՄՆ-ը
- 2) Իրանը և Ավստրալիան
- 3) Բրազիլիան և Ինդոնեզիան
- 4) Ռուսաստանը և Չինաստանը

54 **«Ջերմոցային էֆեկտը» պայմանավորված է.**

- 1) մթնոլորտի շրջանառությամբ
- 2) մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ
- 3) Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվությամբ
- 4) սառցադաշտերի հալմամբ

55 **Ո՞ր բույսերն են որպես հումք օգտագործվում արդյունաբերության տարբեր ճյուղերում.**

- 1) դեղաբույսերը
- 2) տեխնիկական
- 3) կերային
- 4) դեկորատիվ

56 **Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».**

- | | |
|-------------|-----------|
| 1. Թուրքիա | 5. Եմեն |
| 2. Ուկրաինա | 6. Իրան |
| 3. ԱՄՆ | 7. Սիրիա |
| 4. Կանադա | 8. Լատվիա |

57 **Գրել Ախուրյանից սկիզբ առնող ջրանցքների համարները.**

- | | |
|-------------------|--------------------|
| 1. Արմավիրի | 5. Արաքսի |
| 2. Կոտայքի | 6. Շիրակի |
| 3. Արգնի-Շամիրամի | 7. Ստորին Հրազդանի |
| 4. Թալինի | 8. Արտաշատի |

58

Գրել այն հրաբուխների համարները, որոնք Աֆրիկայում են.

- | | |
|--------------|----------------|
| 1. Կրակատաու | 5. Էրեբուս |
| 2. Կամերուն | 6. Դեմավենդ |
| 3. Հեկլա | 7. Կիլիմանջարո |
| 4. Ռուիս | 8. Օրիսաբա |

59

Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|----------------|-----------------|
| 1. Ֆոլկլենդյան | 5. Վիկտորիա |
| 2. Հաիթի | 6. Պուերտո-Ռիկո |
| 3. Կուբա | 7. Վանկուվեր |
| 4. Հրո երկիր | 8. Ճամայկա |

60

Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.

- | | |
|--------------------|-----------|
| 1. մարմար | 5. բազալտ |
| 2. այրվող թերթաքար | 6. խարամ |
| 3. կրաքար | 7. գնեյս |
| 4. տուֆ | 8. կվարց |

61

Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Խաղաղ օվկիանոս.

- | | |
|-----------|---------------|
| 1. Մուրեյ | 5. Ռիո Գրանդե |
| 2. Ամուր | 6. Միսիսիպի |
| 3. Յուկոն | 7. Մեկոնգ |
| 4. Գանգես | 8. Կոլումբիա |

62

Հայկական լեռնաշխարհի տրված լճերի համարները դասավորել ըստ այն լեռների, որոնց վրա տեղակայված են այդ լճերը. Հայկական պար, Արագած, Գեղամա.

1. Գայլատու
2. Ակնա
3. Քարի

63

Տրված պետությունները դասավորել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազման կարգով.

1. Բրազիլիա
2. Արգենտինա
3. Չինաստան
4. Հնդկաստան

(64-65) Երկրի բնակչության թիվը 20 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 16 մլն, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 300 000.

64 Որոշել ծնելիության գործակիցը (%):

65 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

66

Որոշել ավտոտրանսպորտով կատարվող ուղևորաշրջանառությունը, եթե երկրում տարեկան փոխադրվում է 4360 ուղևոր, իսկ փոխադրման միջին հեռավորությունը 12 կմ է:

(67-68) Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -4° , ստորոտին՝ $+10^{\circ}$ (հաշվարկը կատարել 5° -ով):

67

Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

68

Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտին:

69

ՀՀ տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Ռելիեֆային բարդ պայմանների պատճառով խողովակաշարային տրանսպորտը բացակայում է:
2. Ունի ներքին միասնական ավտոմոբիլային ճանապարհային ցանց:
3. Խճուղային ճանապարհային ցանցի խտությունը ցածրադիր, տնտեսապես զարգացած շրջաններում ավելի մեծ է, քան բարձրադիր լեռնային շրջաններում:
4. Գործող երկաթուղային գլխավոր մայրուղին (Այրում–Վանաձոր–Գյումրի–Մասիս–Երասխավան) ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ հանրապետության կենտրոնական մասով:
5. Ի տարբերություն ընդարձակ տարածություններ ունեցող երկրների, բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը տեղի է ունեցել հիմնականում ոչ թե հեռավորությունների, այլ բեռների ծավալների և ուղևորների թվի աճի շնորհիվ:
6. Երկաթուղիների երկարությունը չորս անգամ գերազանցում է ավտոմոբիլային ճանապարհների երկարությանը:

70

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

1. Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 800–1000 մմ է:
2. Վերընթաց գոտիականությունը թույլ է արտահայտված:
3. Կարսի սարահարթում օդի ջերմաստիճանը երբեմն կարող է իջնել -40°C -ից ցած:
4. Տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին՝ 2000–3000 մմ:
5. Տարվա տաք կեսին տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:
6. Գետերը հորդանում են առավելապես աշնանը: